

Հարություն Դեղալյանը  
ընկերների հուշերում

## **Էդուարդ Միրզոյան**

Կոմպոզիտոր ԽՍՀՄ և ՀՀ ժողովրդական արտիստ

Հարություն Դելլայանն անսովոր, հրաշք Երևույթ է մեր արվեստի իրականության մեջ: Նա շատ ինքնատիպ, շատ խորը մտածող և ստեղծագործող անհատականություն էր: Հարությունի ստեղծագործական կյանքը կարծես մի արագացված ընթացք լիներ, ասուպի պես արագ ու փայլատակող: Ներքին մեծ պոտենցիալի տեր էր Հարությունը, իսկ իր ապրած կյանքը, անցած ուղին՝ ֆենոմենալ, չափազանց յուրօրինակ:

Մարդիկ կան, որոնք ինչ-որ մի տարիքում չեն սովորել այբուբենը և այդպես էլ երբևէ չեն սովորում: Հարությունը ոչ միայն սովորեց այբուբենը, այլև դարձավ դրա տերն ու տիրակալը: Նա ոչ միայն ուներ երազանք, ձգտում, այլև այդ երազանքի հանդեպ հավատք ու այն իրականացնելու համար երբևէ իր նախատիպը չունեցող մեծագույն կամք ու կորով: Կուզենայի գուզահեռ անցկացնել Արամ Խաչատրյանի հետ: Հարությունի հոգու զարթոնքի, բռնկման և զարգացման ընթացքում էլ ավելի զարմանալի բան կա, որովհետև Արամ Խաչատրյանը մինչև 19 տարեկանն առնչվել է երաժշտության հետ, սովորել և նվագել է թավջութակ: Հարությունը չի ունեցել որևէ երաժշտական կրթություն, չհաշված իր մորից լսած կոմիտասյան երգերը: Նա իր առաջին քայլերն արեց ժողովրդական կոնսերվատորիայում, և ես գտնում եմ, որ եթե Ժողովրդական կոնսերվատորիան տվեց միայն Հարություն Դելլայան անունը, ապա արդեն արդարացված էր նրա գոյությունը:

Սկզբում նա քիչ գիտելիքներ ուներ, բայց ուներ անսպառ երևակայություն, հակասական, բուռն, անբացատրելի, հեղեղի և փոթորկի նման, բնության տարերային ուժերի պես ահռելի մի ուժ, որը ոչ մի կերպ չէր կարելի կանգնեցնել: Թե որքան կարճ ժամանակահատվածում նա ծանոթացավ իր իսկական կոչման ասպարեզին ու նրա գաղտնիքներին, թե ինչպիսի հաջողությունների հասավ, արդյունքներն ակնառու են... Շատ հարուստ հոգեկան աշխարհ ուներ Հարությունը: Շատ խորը, նրբանկատ, անհանգիստ բնավորության տեր մարդ էր: Նրա երաժշտությունը, որ մի կողմից ավանդական է, մյուս կողմից՝ չափազանց նորարարական, միշտ լի է որոնումներով, ձգտումներով՝ չվախենալով և չխուսափելով ոչնչից:

Հարությունը գիտակցում էր իր արժեքը, իր եզակիությունը, գիտակցում էր իր ուժը, իր կոչումը: Նա մի ազնվական էր՝ ի վերուստ տրված, ազնվական իր համեստությամբ, իր հավատամքով: Այսպես եմ ես այսօր ընկալում Հարություն Դելլայան Երևույթը:

## **Արամ Ղարաբեկյան**

Հայաստանի պետական կամերային նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր

Հարություն Դելլայանը, միանշանակ, եզակի ստեղծագործական ոգի է եղել մեր իրականության մեջ, որը չի գալիս ինչ-որ ավանդույթից և չի էլ շարունակվում: Նա մի Ֆենոմեն է, ինքնին՝ առանձնահատուկ: Թե որպես անձնավորություն, թե որպես ստեղծագործ ոգի, նա երաժշտական լեզվով արտահայտում էր իր ողջ ներաշխարհը և այդպիսով, ասես, ուղղակի մի շրջանակի մեջ մնաց՝ որպես Հարություն Դելլայան: Նա եզակի էր ոչ միայն որպես արվեստագետ, այլ նաև անհատ, որի ապրած կյանքը և անցած ուղին հատուկ օրինակ է մեզ համար: Հարությունը պրոֆեսիոնալ երաժշտությանը մոտեցավ շատ ուշ՝ ներքին ձայնի մղումով, որովհետև արտահայտվելու անհրաժեշտությունը, ասելիքն այնքան ուժեղ էր, որ անհաղթահարելի ոչինչ չկար այդ ճանապարհին: Օրինակելի է այն իմաստով, որ իր այդ կիրքը և հավատքը Հարությունը հասցրեց բարձրագույն արդյունքի, քանի որ իրոք ասելիք ուներ: Նա հեղինակ է մի շարք ստեղծագործությունների, բայց, ցավոք, վաղահաս մահն ընդհատեց այն երկար ճանապարհը, որ դեռ ուներ անցնելու:

Ապացույցը՝ մտքի այն անսահման թռիչքներն են, որ տեսնում ենք նրա ստեղծագործություններում: Չեմ կարող չանդրադառնալ 1984 թվականի իմ առաջին տպավորությանը: Դաշնակահար Հարություն Փափազյանի դեբյուտային համերգն էր Carnegie Hall-ում և ես Բոստոնից մեկնել էի Նյու Յորք՝ ներկա գտնվելու համերգին: Ծրագրում՝ Շոպենի, Դեբյուսիի ստեղծագործությունների կողքին կատարվեց

Դեյլայան ազգանունով կոմպոզիտորի մի ստեղծագործություն, որը կոչվում էր Նվիրում Կոմիտ ասին: Այդ ստեղծագործությունն ինձ գերեց այնչափ, որ իմ մեջ միտք հղացավ՝ դիմել կոմպոզիտորին, որ նա մի գործ գրի իմ ղեկավարած «Մինֆոնովա» նվագախմբի համար: Մինչև հիմա երջանկության մեծ զգացում եմ ապրում, որ այսկերպ պատճառ դարձա այն հրաշալի ստեղծագործության հղացմանը, որ գրեց Հարություն Դեյլայանը, և մենք կատարեցինք: Ինձ համար անմոռանալի է նաև հանդիպումը Հարությունի հետ Լոս-Անջելեսում 1986 թվականին, որը, ցավոք, եղավ միակը, շատ կարճ, ընդամենը մեկ շաբաթ, սակայն չափազանց բովանդակալից ու լեցուն: Մենք հատուկ օրակարգ չուն էինք որևէ բանի մասին խոսելու. սկսում էինք առօրյա խնդիրներից, հասնում զլոբալ փիլիսոփայական շերտերի, մարդկային փոխհարաբերությունների, որոնց զուգահեռները գտնում էինք երաժշտական ստեղծագործության մեջ, ընդ որում ոչ միայն իր՝ Դեյլայանի, այլև ուրիշ կոմպոզիտորների, և ոչ միայն ժամանակակից, այլև դասականների, ասենք՝ Բեթհովենի... Խոսում էինք գրականության, բնության, սիրո, ցավի, երջանկության ապրումների մասին... Դա ապշեցուցիչ էր, քանի որ երբ առաջին անգամ հանդիպում ես մեկին, որոշ ժամանակ է անհրաժեշտ լինում նրա հետ մտերմանալու, բայց Հարությունի հետ այս ամենը շատ անմիջական էր, կար հարազատ ներքին կապ, ու կարծես մենք իրար գիտեինք արդեն մի հազար տարի...

Մինչև այսօր ականջներումս է նրա ձայնը, երբ ասում էր. «Արամ, դու պիտի գաս Հայաստան (ես այն ժամանակ դեռ Հայաստան չէի այցելել), ու մենք պետք է գնանք լեռները և միասին գոռանք...»:

Հիմա, երբ մենք դուրս ենք գալիս շրջաններ և գնում լեռները, միշտ Հարությունին եմ հիշում, զգում նրա ներկայության և այդ գոռոցի հոգևոր, ներքին կարիքը: Այդ գոռոցը միշտ լսում եմ նրա ստեղծագործությունների մեջ:

## **Էմիլիո Պոմարիկո**

Դիրիժոր, Իտալիա, Միլանի միջազգային երաժշտական ակադեմիայի պրոֆեսոր

Ընդամենը վերջերս ինձ բախտ վիճակվեց ծանոթանալ Հարություն Դեյլայանի արտասովոր երաժշտությանը և նույնքան արտասովոր, սակայն կարճատև կյանքին: Կարողանալ լսել նրա երաժշտությունը նշանակում է հավաստիանալ նրանում, որ արվեստի և այլ բնագավառներում տեղի ունեցած շրջադարձերով նշանավորված 20-րդ դարում երաժշտության աշխարհը տեսել է նորարարություններ, որոնք միայն շատ քչերին կարող են վերագրվել: Այս վառ անհատականությունը ապրեց իր կյանքը՝ լի մտավոր ու հոգևոր զարգացման հասնելու վճռականությամբ, սովորելով չվախենալ պատմության ձայնի դեմ առճակատումից, մշակութային և ազգային առումով իրեն հավատարիմ մնալուց: Նրա երաժշտությունը շատ բովանդակային է և հղկված, հագեցված արտասովոր եթերայնություն առաջացնող հնչյուններով, ուր իշխում է թեթևության և խորության կատարյալ սինթեզը: Մեծ տպավորություն են թողնում բեմի վրա կատարողների շարժը, վստահաբար կատարված նորարարությունը և գործիքային կատարման նոր հնարքների ճշգրիտ կիրառումը: Դեյլայանի ձեռքերում նրանց, ասես կախարդական ուժի շնորհիվ, ներվում է ավանդականի հետ կամայական այն խզումը, որը տեղի է ունենում քնարական ամբողջական պատկերի արտահայտման նպատակով. պատկեր, որը հղկված է այնպիսի ջերմությամբ, հաստատականությամբ և մտահղացման հանդեպ կոռ համոզմամբ, որ միայն հանճարի տեր երաժիշտը կարող էր ունենալ: Էական ու համոզիչ է այն խորը հավատը, որ առկա է Դեյլայանի երաժշտության մեջ հնչող վոկալ կատարման զգացմունքայնությունում, որի անհրաժեշտությամբ, հնարավորության մեջ խորապես համոզված է հեղինակը: Երգը հնչում է կարտոսից բխող պոետիկ հուզականության այնպիսի ուժով, որ դժվարանում ես պատկերացնել նրա հնարավորությունը: Բնչպե՞ս չտխրել, որ ճակատագրի բերումով այս պարզ, ուժեղ և անկեղծ երաժշտի կյանքն այդքան կարճ տևեց:

## **Բերդ Բաբայան**

Բանաստեղծ

Յուրաքանչյուր սրտացավ մտավորական մի հոգսով է համակվում իր կյանքի ընթացքում. այն է՝ բռնել իր սեփական ազգի ձեռքից և տանել էլի մի քայլ առաջ դեպի քաղաքակրթություն: Եթե նա իր այդ

առաքելությունը չի կարողանում կատարել, ուր եմն նա երբևիցե մտավորական չի էլ եղել: Հարություն Դելլայանը լավ էր հասկացել այս ամենը: Նա չգնաց բոլորի, ընդհանուր ու հեշտ ճանապարհով: Նա բռնեց ամենադժվարին ճանապարհը: Ավելին կասեմ, նա բռնեց նոր ճանապարհի բացելու ուղին: Նա հայ երաժշտության մեջ առաջին կոմպոզիտորն էր, որ ձեռք մեկնեց անհասանելիին այն իմաստով, որ փորձեց բանալ մի առեղծված. ի՞նչ է թաքնված լուսության մեջ: Այն առեղծվածային ու խորհրդավոր լուսության մեջ, որ շատ անգամ ավելի բան ունի ասելու, քան աղմուկը, տեսանելին ու շոշափելին: Հարությունը լռակյաց էր. փորձում էր իր լուսությամբ հաղորդակցվել ուրիշի լուսությանը, մութ անկյունն երում ծվարած լուսություններին: Եվ նա հասկացավ, գտավ բանալին, կարողացավ խոսեցնել այդ լուսությունը իր երաժշտությամբ, և այն, ինչ նա արեց իր ստեղծածով, դուրս եկավ համաշխարհային ասպարեզ: Ես այսօր համարձակվում եմ կազմել մի ոսկե եռանկյունի վաղամեռիկ անհատների: Մի տեղը կարծես թափուր էր, և Հարությունը գնաց լրացնելու այդ տեղը: Ահա նրանք. Պարույր Սևակ, Մինաս Ավետիսյան, Հարություն Դելլայան: Ահա այն ոսկե եռանկյունին, որ վերջին տասնամյակների ընթացքում հայ ժողովուրդը մեծ գոհողությունների, կորստյան գնով ձեռք բերեց և մեծամեծ տառերով բարձրացրեց մինչև երկինք:

### **Լադիսլավ Կուպկովիչ**

Կոմպոզիտոր, Գերմանիա

Հ. Դելլայանը Հայաստանի առաջատար կոմպոզիտորներից է: Նրա ստեղծագործության մեջ մեծ վարպետությամբ զուգորդվում են հայկական երաժշտության ազգային տարրերը և ժամանակակից արևմտաեվրոպական երաժշտության ձևերը: Այսպիսով նրան հաջողվում է պրոֆեսիոնալ ամենաբարձր մակարդակով մեր՝ եվրոպացիներիս լսողությանը հասցնել երաժշտական ինքնատիպ արևելյան աշխարհը, ինչը մեզ համար չափազանց հետաքրքիր ու գրավիչ է: Դրա ամենավառ օրինակներից է կոմպոզիտորի Նվիրում Կոմիտասին սոնատը:

### **Հակոբ Հակոբյան**

Հայաստանի ժողովրդական նկարիչ

Մեր ժողովրդի համար անփոխարինելի կորուստ եղավ Յ. Դելլալեանի վաղաժամ մահը: Այնքան իդձեր չիրականացան եւ մենք զրկուեցանք արուեստի հրաշալիքներէն... Բախտ ունեցայ մեծ յուզումով լսելու իր սքանչելի գործերէն... Այդ պահէն Յարութիւնը ինձի համար դարձաւ կեանքիս ամենաանմոռանալի հայերէն մէկը: Այդ օրը հոգիս լեցուց հայկական հպարտութեամբ: Չեմ գիտեր, կա՞յ աւելի մեծ արժանիք, քան այն, երբ մարդ օժտուած է ուրիշին յուսադրելու, ինկած տեղէն բարձրացնելու կարողութեամբ: Յարութիւնը իր գործով եւ կեանքով ամենավառ օրինակն էր խիզախ, պայքարող իսկական հայ մարդու: Յ. Դելլալեանը ինձի համար, հայ ժողովրդի ամենագտարինն ներկայացուցիչներէն մէկն է, մահուան կողմէ՝ անպարտելի...

### **Արևշատ Ավագյան**

Բանաստեղծ, նկարիչ

Հարություն Դելլայանը ստեղծագործական դժվարին կյանքով ապրած արվեստագետի մարմնացում էր: Իր երկայնիկ մեջ կրում էր բազմադարյան հայ մշակույթի առողջ ու կենսունակ մղումը, ազգային ոգու ինքնատիպ դրսևորումները, նրա մշակութային հոգեկերտվածքը: Երբ մենք 1984 թվականին ծանոթացանք, նա արդեն որոշակիորեն ճանաչված ու գնահատված արվեստագետ էր, մեկն այն քչերից, որ նպատակասլաց ու համառորեն հաղթահարում էր կյանքի դժվարությունները և անմնացորդ նվիրված էր երաժշտական արվեստին, իր ասելիքը համահունչ դարձնելով ազգային ու համամարդկային արվեստի չափանիշներին: Հարություն Դելլայանը երաժշտական ավանդների լավագույն ձեռքբերումների պահպանման ջատագովներից էր, մեծերի փորձը ուսումնասիրողներից, գնահատողներից և ստեղծագործաբար յուրացնողներից մեկը: Ուներ հայեցի մտածողությունը երաժշտական հնչերանգային արտահայտչաձևերով մարդկանց հասու դարձնելու մտահոգությունը: Հարությունը նորարար էր: Ազգային ավանդներից չկտրվելով, նա իր ստեղծագործական որոնումների

շրջանակի մեջ էր ներառում ժամանակակից երաժշտության գաղափարակերպարային մտածողության առաջադրած նորամուծությունները: Եվ կարողանում էր իր մտքերը, հույզերն ու զգացմունքները արտահայտել ինքնատիպ լեզվով: Հարություն Դելլայանը կարճ ապրեց, բայց կարողացավ բռնել բոլոր արվեստ ազետների ցանկալի անմահության ճանապարհը, մի բան, որ չի հաջողվում նույնիսկ խոր ծերության հասնող շատ ստեղծագործողների: Հարությունը երաժշտական ձիրքի բնածին մեծ ժառանգություն էր ստացել իր նախնիներից և կարողացավ այն ստեղծագործաբար հարստացնելով՝ թողնել իր ժողովրդին:

## **Ջութան Պեշկո**

Դիրիժոր, Հունգարիա

Հարություն Դելլայանի ստեղծագործությունների հիմնական առանցքը դեռևս իր ծննդից 22 տարի առաջ տեղի ունեցած հայերի ցեղասպանությունն է, որ կատարվել է 1915 թվականին Օսմանյան կայսրությունում: Այս աներևակայելի ողբերգությունը և իր ազգի համընդհանուր ցավը որոշիչ դեր է ունեցել Դելլայանի արվեստում: Երբ առաջին անգամ լսեցի նրա ստեղծագործությունները, տպավորությունը շատ մեծ էր, զգացի, որ ականջներիս մեջ միշտ հնչում է այդ երաժշտությունը: Իսկ երբ ծանոթացա նաև իր կյանքի պատմությանը, հասկացա, որ անցած ուղին բոլորովին հեշտ չի եղել, իր կարճ կյանքի ընթացքը լի է եղել պայքարով, մեծ կամքի ուժով և մարդկային բարձր հատկանիշներով՝ իր սեփական ու անձնական աշխարհի երաժշտության համար: Այդ աշխարհում իր վերջնական նպատակը կառուցողական կամ բարդ նոտաների փորձարկումը չէր, այլ հակառակը, ուսումնասիրում և կիրառում էր ակուստիկ նոր և հիանալի արտահայտությունների հնարավորությունները, որոնք իր ստեղծագործություններում գտնում են բարոյական խոր դիրքորոշում:

## **Տիգրան Մանսուրյան**

Կոմպոզիտոր, ՀՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր

Հարությունը երաժշտական վառ անհատականություն էր, արտակարգ հմայիչ, գեղեցիկ ներաշխարհով անձնավորություն, լավ ընկեր: Նա ինձ քանիցս ցույց էր տալիս իր նոր գրած ստեղծագործությունները, որոնք խորապես հասունացած, ներքին մեծ խմորումների ճանապարհով, կյանքի բովով անցած մեծ կենսափորձով մարդու երաժշտական դրսևորումների հիմնավորումն էին: Այս չափանիշները նրան բնորոշ մնացին իր ամբողջ ստեղծագործական կյանքի ընթացքում և երբեք իր համար այսպես կոչված «կոմպոզիտորական տեխնոլոգիայի» խնդիրները չառանձնացան ներքին ապրումներից, համոզումներից: Դրանք առանձին տեխնիկական խնդիրներ չէին, որոնք փորձում էին իրենցով իրականություն ստեղծել, ճիշտ հակառակը՝ իրականության զգացողությունը, իր ապրած կյանքը բերեցին այդ հորինվածքների ստեղծմանը: Դրանք շատ նոր էին հայ երաժշտության համար այդ տարիներին, շատ անսպասելի՝ իրենց լուծումներով: Նրան գրավում էին թե՛ հնչյունի կյանքն ընդհանրապես, թե՛ հնչյունի կյանքը տարածություն մեջ, կոմպոզիցիաներ, որոնք ուղղված էին ոչ միայն երաժշտահոգեբանական հարցեր շոշափելուն, այլև իրենց էությանը, կարծես, ձգտում էին ներխուժել առասպելաբանության շրջանակները անհատի միջով դեպի համընդհանուր մի վիճակ, որը դեռևս արևելյան փիլիսոփայության հիմքերի վրա կարող էր գոյանալ: Կասկած չունեմ, որ նա այդ ուսմունքներին լավատեղյակ էր և դրանց հիման վրա էր կառուցում իր գործերը կամ որոշ ստեղծագործություններ: Դելլայանի երաժշտական մտածողությունը շատ ազգային է, հարուստ այն ելևէջներով, նրբերանգներով, որոնք գալիս են հայկական պարային ռիթմերից, լեզվական առանձնահատկություններից: Ես օրինաչափ եմ համարում այն, որ նրա երաժշտությունը միանգամից գրավեց արտասահմանյան երաժշտական կազմակերպությունների և առհասարակ երաժշտասերների կամ ունկնդիրների ուշադրությունը: Ուրախ եմ, որ նա իր կարճ ստեղծագործական կյանքի օրոք ապրեց այդ բերկրանքը գնահատվելու բարձր չափանիշներով, ընկալելի լինելու թե՛ իբրև հայ երաժիշտ, թե՛ իբրև արդիական հայ երաժշտության սահմաններն ընդլայնող երաժիշտ: Ինձ համար նրա հեռանալն այնքան առեղծվածային է, որքան և նրա մուտքը երաժշտական աշխարհ: Թվում էր, թե դեռ երկար տարիներ այդպես պիտի աշխատեր՝ իր համեստ վարքագծով: Մակայն իր գործն ամեննին էլ համեստ չէրավ: Դա ստեղծագործական պտոթկում էր, որ հազվադեպ է հանդիպում... Կարծում եմ, որ իր ստեղծագործական աշխարհը, որն այսօր էլ ապրում է, կունենա իր բեղմնավոր շարունակությունը

հատկապես այն երաժիշտների համար, որոնք նույն հետաքրքրություններով են ապրում, ինչով և հետաքրքրված էր կոմպոզիտոր Հարություն Դելլալյանը:

### **Արմինե Կալենց**

Հայաստանի վաստակավոր նկարչուհի

Երբ առաջին անգամ լսեցի Յարութին Դելլալեանի ստեղծագործությունները՝ ցնցուեցայ: Իր տաղանդին մեջ հայու գերբնական ոյժ մը զգացի, աննկուն ոգի... Ինձի շատ հարազատ էր: Աշխատելուս պահերուն պահանջ ունեցայ լսելու անոր երաժշտությունը: Իմ «Քարեր» շարքի նկարներէն մէկը ստեղծած եմ Յարութինի երաժշտութեան ներքոյ: Այդ հնչիւններէն անորսալի ոգի մը ներդաշնակուծ է նկարներուս...

### **Արմեն Բուդաղյան**

Երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր

Վերջերս, անցած-գնացած տասնամյակների մամուլը թերթելիս, աչքովս ընկավ նախկին ԽՍՀՄ կենտրոնական «Սովետսկայա Մուզիկա» երաժշտական հանդեսի նյութը՝ նվիրված Հարություն Դելլալյանի Topophonո կամերային կոնցերտին: Դիպուկ էր նրան տրված բնութագիրը. «Դա լեռնային օդով հագեցած անծայր տարածությունների երաժշտություն է, ուր առավել բնականորեն են միաձուլված ժամանակակից սոնորիստական և ազգային ինտոնացիոն դարձվածքները՝ գործիքային թատրոնի և կոլաժի տարրերի ընդգրկմամբ»: ...Հարությունը ուշ մուտք գործեց երաժշտարվեստ և շատ շուտ հեռացավ կյանքից: Նրա գործերը արագորեն ճանաչում ստացան և սկսեցին հնչել համերգներում, ռադիոյով, հեռուստատեսությամբ: Նա հեռու էր կյանքի «նյութեղեն» ընկալումից և ապրում էր հոգևոր չափանիշներով: Շատ գեղեցիկ էր և պահվածքով պարկեշտ: Հաճախ մտածում էի, որ նա առանց դիմահարդարանքի կարող էր դառնալ ցանկացած ֆիլմի հերոս: Վերջին անգամ նրան հանդիպեցի Դիլիջան տանող լեռնային ավտոճանապարհին: Վերադառնում էի Դիլիջանի կոմպոզիտորների տնից, իսկ Հարությունը շտապում էր այնտեղ՝ աշխատելու: Սակայն նրա ավտոբուսը հիմնավորապես փչացել էր, և վարորդը ապարդյուն ջանքեր էր թափում այն վերականգնելու: Շուրջը խոնավ էին ջղայնացած ուղևորները, իսկ Հարությունը մեղմիկ ժպտում էր. «Բնություն, թարմ օդ, կակաչներ... Մարդուս էլ ի՞նչ է պետք...» այդ տարի կակաչներն իրոք անհամար էին: Կանգնեցինք, զրուցեցինք, բաժանվեցինք... Այդպես տպավորվեց հիշողությանս մեջ իմ սիրելի, անդավաճան ընկերը՝ ժպտերես, Դիլիջանի չքնաղ բնության գրկում, ալ-կարմիր կակաչների ֆոնի վրա...

### **Իգոր Ժուկով**

Դիրիժոր, Ռուսաստանի ժողովրդական արտիստ

Մեծ խանդավառությամբ ու հիացմունքով ղեկավարեցի Հարություն Դելլալյանի Կամերային նվագախմբի համար գրված Topophonո կոնցերտը, որը տեղի ունեցավ այս տարվա համերգաշրջանի բացման արարողության ժամանակ Մոսկվայի կոմպոզիտորների տան դահլիճում: Հիրավի, այս ստեղծագործությունը հայկ սկան երաժշտության նվաճումներից է: Դելլալյանի երաժշտությունը մեկ անգամ ևս ապացուցեց, որ հայերի երաժշտական միտքը ներքին հսկայական կարողություններ ունի:

### **Արամ Սաթյան**

Կոմպոզիտոր, դոցենտ

Հարությունին համարում եմ բախտավոր մարդ: Հաճախ են ասում՝ բանվոր էր: Բայց կյանքի այդ փորձը, որը պակասում է պրոֆեսիոնալ կյանք մտնող շատերին, իրեն օգնեց ճիշտ կողմնորոշվել

իրավիճակում: Հարությունը երաժշտության մեջ ունեցավ շատ կարճ կյանք, այսինքն՝ այն բոլոր տարիները, ինչ ուրիշները նվիրում են ուսումնասությանը, որ մոտավորապես կազմում է 15 տարի, նաև՝ ուսանեց, ն՝ 90 Հետադարձ հայացք ստեղծագործեց, ն՝ հասավ միջազգային մակարդակի ճանաչման ու աներևակայելի հաջողությունների: Ընդհանրապես ստեղծագործողը պետք է զգա իր ժամանակը: Հարությունը շատ իմաստուն էր, նա իր կյանքի փորձով զգաց ժամանակը: Նա զգաց տարածական երաժշտությունը: «Տարածական երաժշտություն» հասկացողությունը դեռ մինչև հիմա էլ այդքան ընդունված չէ Հայաստանում, քչերն են փորձ եր արել այդ բնագավառում: Մի ստեղծագործության մեջ, ընդամենը մեկ գործիքով Հարությունը կարողանում է մանրանկարչությունից հասնել դեպի մեծակտավ, լայնածավալ մի կոթողի, որն այնքան ներդաշնակ, այնքան տիեզերական, այնքան վերացական է և միևնույն ժամանակ այդքան մարդկային:

## **Մաույուս Սոնդեցկիս**

Դիրիժոր, կոմպոզիտոր, Լիտվա

Topophonon-ն իր խոհականությամբ և դրամատիզմով առանձնահատուկ տեղ է գրավում ոչ միայն Դելլայանի ստեղծագործությունների, այլև ընդհանրապես նվագախմբային երկացանկում: Այս ստեղծագործությունը մեղիտացիա է՝ իրար հակասող և, միևնույն ժամանակ, իրար լրացնող երաժշտական և փիլիսոփայական շերտերի:

## **Արգար Սուրադյան**

Կլարնետահար, ՀՀ վաստակավոր արտիստ, պրոֆեսոր

Հարություն Դելլայանի հետ ծանոթացել եմ դեռևս այն տարիներին, երբ երկուսս էլ դասավանդում էինք Արվեստի թիվ 1 դպրոցում: Հաճախ էինք զրուցում ամենատարբեր թեմաներով: Մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում նվագախմբի բոլոր գործիքների հանդեպ, այդ թվում՝ նաև կլարնետի: Ժամեր շարունակ անցկացնում էր իմ դասարանում, մանրամասն հարցով փորձ անում գործիքի ձայնարտ արերման, տեխնիկական հնարքների կիրառման, գունային հնարավորությունների մասին... Հետաքրքրությունը իրոք անսահման էր... Վերջիվերջո հասունացավ կլարնետի համար մի գործ գրելու գաղափարը: Մինչ այդ արդեն ծանոթ էի Դելլայանի որոշ ստեղծագործություններին: Սկզբում առաջարկեցի նրան գրել սոնատ կլարնետի համար, բայց աստիճանաբար ստեղծագործությունը ստացավ իր վերջնական տեսքը՝ Meditations կլարնետի համար (1981): Ստեղծագործությունը շատ գործիքային է: Այդ գույները, տեքստը իդեալական կերպով համապատասխանում են կլարնետի ռեգիստրային, տոնայնական հնարավորություններին: Շատ հաջողված էին նորարարական էֆեկտները: Այստեղ Հարություն Դելլայանը առաջին անգամ Հայաստանում կիրառեց կլարնետով ակորդային հնչողությունների տեխնիկական հնարքը: Ինքը վստահ էր, որ հենց այդպես պիտի հնչի, թեև կլարնետին ընդհանրապես բնորոշ չէ ակորդային տեխնիկան: Առաջին կատարումն իսկ մեծ իրարանցում առաջացրեց կատարող-մասնագետների շրջանում, որոնք առաջին անգամ լսեցին ակորդներ կլարնետով... Meditations-ը ձայնագրվեց և իր արժանի տեղը գտավ Հայաստանի ռադիոյի Ոսկե ֆոնդում: Հետագայում այդ ձայնագրությունը միշտ արժանանում էր հատուկ ուշադրության մասնագետների կողմից: Ուզում եմ հատկապես նշել իսպանական Real Musical հրատարակչության մեծ հետաքրքրությունը, որը հետագայում տպագրեց այն: Հիշում եմ, շատ ոգևորված պատմում էր, որ այն բարձր գնահատանքի է արժանացել և մասնագետները հատուկ նշել են կատարման բարձր պրոֆեսիոնալիզմը: Meditations-ի երաժշտությունը շատ հայկական է, միևնույն ժամանակ անչափ ինքնատիպ՝ «դելլայանական»: Հարությունը իսկապես յուրօրինակ մեղեդային մտածողություն ուներ, որ բոլորից տարբերվում էր: Նա շատ ուշ սկսեց, բայց կարողացավ թողնել մի հարուստ և ինքնատիպ ստեղծագործական ժառանգություն:

## **Վոլքեր Թեսսմանն**

Ֆագոտահար, Գերմանիա

Հարություն Դելլայանի «Մեղիում» սոնատը ինքնատիպ նորամուծություն է փողային երաժշտության

համաշխարհային գանձարանում: Այն ֆենոմենալ է իր հնարամտությամբ և կոմպոզիտորի բարձրագույն ներշնչանքի արգասիքն է: Փողային երաժշտության բնագավառում Դելլայանի մտածելակերպի նորարար միտումները, վստահ եմ, լայն հորիզոններ կբացեն այդ ասպարեզում ստեղծող կոմպոզիտորների, ինչպես և կատարողների համար:

## **Ավետ Տերտերյան**

ԽՍՀՄ և ՀՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր

Հարություն Դելլայանը տաղանդավոր, յուրահատուկ մտածողության, միշտ նորը փնտրող, իր սեփական լեզուն ունեցող և որ ամենակարևորն է՝ ասելիքի ոչ շինծու անկեղծությամբ օժտված երաժիշտ է: Նրա ստեղծագործությունը բաժանվում է երկու նշանակալի շրջանների: Առաջին շրջանը ավանդական դասական գրելաճի յուրացումն է, և երկրորդը՝ վերջին տարիներին ստեղծածը, որտեղ նորի որոնումները որոշակիորեն ձեռք են բերել յուր ահատկության գծեր: Հատկապես այս ստեղծագործություններն էլ հեղինակին բերել են ստեղծագործական հաջողություններ: 92 Հետադարձ հայացք Վերջերս կայացած երիտասարդ կոմպոզիտորների պլենումում կատարված նրա թավջութակի և դաշնամուրի սոնատը, որը իր հիմքում շատ անկեղծ ստեղծագործություն է, օժտված է խորը փիլիսոփայական և ազգային բնութագրով: Այն ունեցավ շատ մեծ հաջողություն՝ արժանանալով ունկնդիրների և երաժշտական քննադատների բարձր գնահատմանը:

## **Արտաշես Շելեյան**

Երաժշտական հրատարակիչ, ԱՄՆ

Անցյալ կիրակի ներկա եղա երգեհոնահար Պերճ Ժամկոչյանի մենահամերգին, որը տեղի ունեցավ Methuen Memorial Music Hall-ում: Նա Միացյալ Նահանգների ամենավարպետ կատարողներից մեկն է, և ամեն անգամ նրան ունկնդրելը, հիրավի, հազվադեպ հայտնություն է ինձ համար: Համերգում առաջին անգամ հնչեց մի նոր և շատ գեղեցիկ ժամանակակից լեզվով գրված ստեղծագործություն, որը նվիրված է Պերճին: Հաղթական Ռեքվիեմը գրված է Եղեռնի 70- ամյակի առիթով: Հպարտանում եմ ամեն անգամ, երբ տեսնում եմ տաղանդավոր հայ մարդու, կոմպոզիտորի, որի ստեղծագործությունները կարելի է համեմատել աշխարհի ցանկացած առաջատար կոմպոզիտորի երկերի հետ: Այդպիսի հայտնություն էին ինձ համար Հարություն Դելլայանը և իր Հաղթական Ռեքվիեմը: Միայն ավստում եմ, որ նման ստեղծագործություններ միջազգային երկացանկերում հազվադեպ են հնչում և դրանք լսելու շատ քիչ հնարավորություններ կան: Որոշ գործեր շատ արժանի են դրան: Համընդհանուր ճանաչում ունի Ա. Խաչատրյանի անունը: Սակայն վստահ եմ, որ կան այլ անուններ, որոնք նույնպես արժանի են նման պատվի և վերաբերմունքի:

## **Պարուհի Թեփեղիկյան**

Նկարչուհի

Ծանոթ լինելով դաշնակահար Հարություն Փափազյանի ընտանիքի հետ, խնդրեցի նրա ձայնագրությունները, որպեսզի վերաձայնագրեմ ինձ համար: Ձայներիզի մյուս կողմը գրված էր՝ DELLALIAN. Dedication To Komitas. Խնդրեցի միացնել, և ի՞նչ... Աստվածային, հրաշալի մի գործ. երաժշտության ներգործած ազդեցության տակ աչքիս առջևով անցավ մեր պատմությունը, հայ ժողովրդի տառապանքները, Եղեռնը: Եթե Դելլայանը այլևս ոչինչ չգրեր, կարծում եմ, որ հայ ժողովրդի արվեստի պատմության մեջ կմնար որպես ամենամեծ արվեստագետներից մեկը, քանի որ ոչ մի նկարիչ, ոչ մի կոմպոզիտոր այսպես չի շոշափել այդ մեծ թեման: Ինձ համար այս սոնատը եղել է «Հայր մեր», որը լսում էի անվերջ եւ չէի հագնում: Այս ուժեղ տպավորությունների մեջ ծանոթացա Մեծն Դելլայանի հետ, որը կատարյալ համեստության մի մարմնավորում էր: Հայտնեցի իր դիմանկարը նկարելու ցանկությունս և այսպես ստեղծվեց իմ շատ սիրելի կոմպոզիտոր Հարություն Դելլայանի դիմանկարը, որը իմ արվեստանոցի զարդն է: Այսօր աշխատելիս էլ Հարությունի երաժշտությունը շատ հաճախ է ուղեկցում ինձ...

## **Աշոտ Բաբայան**

## Կոմպոզիտոր

Հարություն Դելլայանը 80–ական թվականների ամենաինքնատիպ կոմպոզիտորն էրից է: Հզոր ու մեծ տաղանդը, խորը գիտելիքները, միայն իրեն հատուկ մտածողությունն են ընկած նրա յուրաքանչյուր ստեղծագործության հիմքում՝ լինի սիմֆոնիկ թե կամերային: Արդիական միջոցներով, խորը ազգային հենքով նրա երկերը հասկանալի և հոգեհարազատ են թե՛ հայ, թե՛ այլազգի ունկնդրին:

## Մարալ Բեդյան

Երաժշտական քննադատ, Նյու Յորք

Հարություն Դելլայանը Նվիրում Կոմիտասին ստնատով ստեղծել է Մեծ Կոմիտասի և հայոց պատմության ողբերգական էջերի երաժշտական հուշարձան: